

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐՈՒՄԱՂԵՄ, ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ

Posted on August 28, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



Դարաւոր Անցեալ Եւ Վտանգուած Ապագայ

Հարցազրոյց Սաղիմահայ Գաղուբի Ակնառու Ներկայացուցիչներէն Յակոբ Անդրեասեանին Հետ

Սագօ Արեան, Երուսաղէմ, Օգոստոս 2014

Խօսակիցս՝ Յակոբ Անդրեասեան, Երուսաղէմի գաղուբի ճանչցուած ազգայիններէն է: Ան երկար տարիներ եղած է ՌԱԿ-ի անդամ եւ վարած՝ պատասխանատու բազմաթիւ պաշտօններ, ինչպէս ՌԱԿ-ի Կեդրոնական Վարչութեան Ատենադպիր, ապա Փոխ-Ատենապետ: Այժմ Երուսաղէմի Հայ Երիտասարդաց Միութեան Ատենապետն է: Անդրեասեան, Չէյթունցի Տէր Կարապետ Աւագ Քահանայի (Չէյթունցի Կարապետ) որդին է, որ իր մօրենական կողմի մեծ հօրմէն ժառանգած է յախճապակեայ սպասներու եւ զարդարանքներու պատրաստութիւնն ու առեւտուրը:

Անդրեասեանի համար Արաբ-Իսրայելեան բաւական բարդ հակամարտութեան ամէնէն յետին մանրամասնութիւնները իր առօրեայ կեանքին մաս կը կազմեն: Գիտէ Իսրայել պետութեան խնդիրները եւ կը հասկնայ Կազայի խնդիրներուն ամէն խորքային հարցերը: Բայց ասոնցմէ անդին իր համար ամէնէն հիմնականը հայութեան առջեւ ցցուած հարցերներն են ու նոր մարտահրաւերները: Այս առումով ան կ'ըսէ. «Ինծի համար հարցերուն հիմնականը հայութեան ակնոցով նայիլն է: Եթէ տուեալ խնդրին մէջ մեր ժողովուրդին օգուտ կայ, ապա ես այդ խնդրին կրողն եմ:» Անոր համար նաեւ կարեւորագոյն հիմնահարց է Երուսաղէմի հայութեան այսօրուան իրավիճակը, որ իր կարծիքով այսօր մոռցուած է հայութեան կողմէ:

Դարաւոր Անցեալ Եւ Վտանգուած Ապագայ

Հարցազրոյց Սաղիմահայ Գաղուբի Ակնառու Ներկայացուցիչներէն Յակոբ Անդրեասեանին Հետ

Սագօ Արեան, Երուսաղէմ, Օգոստոս 2014

Խօսակիցս՝ Յակոբ Անդրեասեան, Երուսաղէմի գաղուբի ճանչցուած ազգայիններէն է: Ան երկար տարիներ եղած է ՌԱԿ-ի անդամ եւ վարած՝ պատասխանատու բազմաթիւ պաշտօններ, ինչպէս ՌԱԿ-ի Կեդրոնական Վարչութեան Ատենադպիր, ապա Փոխ-Ատենապետ: Այժմ Երուսաղէմի Հայ Երիտասարդաց Միութեան Ատենապետն է: Անդրեասեան, Չէյթունցի Տէր Կարապետ Աւագ Քահանայի (Չէյթունցի Կարապետ) որդին է, որ իր մօրենական կողմի մեծ հօրմէն ժառանգած է յախճապակեայ սպասներու եւ զարդարանքներու պատրաստութիւնն ու առեւտուրը:

Անդրեասեանի համար Արաբ-Իսրայելեան բաւական բարդ հակամարտութեան ամէնէն յետին մանրամասնութիւնները իր առօրեայ կեանքին մաս կը կազմեն: Գիտէ Իսրայել պետութեան խնդիրները եւ կը հասկնայ Կազայի խնդիրներուն ամէն խորքային հարցերը: Բայց ասոնցմէ անդին իր համար ամէնէն հիմնականը հայութեան առջեւ ցցուած հարցերներն են ու նոր մարտահրաւերները: Այս առումով ան կ'ըսէ. «Ինծի համար հարցերուն հիմնականը հայութեան ակնոցով նայիլն է: Եթէ տուեալ խնդրին մէջ մեր ժողովուրդին օգուտ կայ, ապա ես այդ խնդրին

կրողն եմ:» Անոր համար նաեւ կարեւորագոյն հիմնահարց է Երուսաղէմի հայութեան այսօրուան իրավիճակը, որ իր կարծիքով այսօր մոռցուած է հայութեան կողմէ:

Կազայի վերջին պատերազմին, «Համաս»ի մօտեցումներուն, Իսրայէլի վարած քաղաքականութեան, ինչպէս նաեւ Երուսաղէմի հայկական կալուածներու կարեւորագոյն խնդրին մասին գրուցեցի Յակոբ Անդրեասեանին հետ: Ահաւասիկ մեր գրոյցը:

- Պրն. Անդրեասեան, կ'ենթադրեմ, որ այս 10-րդ պատերզամն է, որուն ականատես կ'ըլլաք: Ինչպէ՞ս կը գնահատեք ընդահուր իրավիճակը:

Այսօր ընթացող պատերազմը բոլորովին տարբեր է նախորդ տարիներուն տեղի ունեցած պատերազմներէն: Այն իմաստով, որ պատերազմը տեղի կ'ունենայ Իսրայէլի եւ Իսլամական խալիֆայութեան տենչացող եւ Պաղեստինեան Կազա շրջանին վրայ տիրապետութիւն հաստատած «Համաս»ի գիւտորական թեւին միջեւ: «Համաս» նոյնիսկ չէ հետաքրքրուած Պաղեստինով այլ ան մաս կը կազմէ ծայրայեղ Իսլամական ընդհանուր ծրագրի մը, որուն սահմանները կ'երկարին մինչեւ Իրաք եւ Սուրիա:

- Տեղեկութիւններ կան, որ «Համաս» մեծ ճնշումներ կը կիրարկէ Կազայի ժողովուրդին վրայ:Որքանով ճիշդ է այս տեղեկութիւնը:

Այո՛, այդպէս է: Կրօնական որեւէ իշխանութիւն բնակաբանաբար ճնշուածութիւն պիտի ստեղծէ տուեալ հատուածի մը մէջ: Ու այս խօսքը կը վերաբերի նաեւ Կազային: Հոն իշխանութիւնը կրօնական է եւ այդ մէկը բնականաբար ճնշուածութիւն կը ստեղծէ:

- Երեկ Իսրայէլի նախկին նախագահ Շիմոն Փերես յայտարարութիւն մը կատարելով ըսած է, որ Արաբական աշխարհը այլեւս նեցուկ չի կանգնիր «Համաս»ին: Ի՞նչքանով ճիշդ է այս խօսքը:

Մասամբ ճիշդ է, որովհետեւ Արաբական պետութիւնները բոլորն ալ լուրջ տագնապներ կ'ապրին: Կարծեմ լաւ գիտեք, որ Իրաք եւ Սուրիա ինչ պայմաններու տակ են: Իսկ մնացեալ բոլոր պետութիւնները, մինչեւ Հիւսիսային Ափրիկէի Արաբական պետութիւնները, յայտնուած են շատ թոյլ վիճակներու մէջ: Արաբներու մեծամասնութիւնը նպատակայարմար կը տեսնէ, որ «Համաս»ի գիւտորական ուժը ջլատուի:

- Իսկ ի՞նչ կարելի է ըսել Իսրայէլի մասին:

Իսրայէլի վիճակը նոյնպէս նախանձելի չէ: Նաթանիաիոյի կառավարութիւնը այսօր լուրջ տագնապի առջեւ է այն իմաստով որ, անոր դէմ ցցուած թշնամին բոլորովին այլ որակի թշնամի մըն է :

- Կրնա՞ք քիչ մը մանրամասնել:

Իրավիճակը բացատրելու համար այստեղ պիտի ուզէի մէջբերել Իսրայէլի պաշտպանութեան յայտնի նախարարներէն՝ Մոշէ Տայանի խօսքը, երբ ան առիթով մը ըսած է. «Վախցե՛ք այն ատեն, երբ Արաբը մեռնիլ կը սորվի»:

- Այսի՞նքն:

Գիտե՞ք, այսօրուան Պաղեստինցիներ, որ կը ճակատի Իսրայելի դեմ, տարբեր է անցեալի Արաբներ: Բոլորդ կը հետեւիք զանգուածային լրատուութեան (մետիային) ու կը տեսնէք, որ անչափահաս երեխաներ փողոց իջած են պայքարելու համար: Օրինակ, օրեր առաջ ցոյց տուին 8-9 տարեկան երեխայ մը, որ կը պոռար Իսրայելացի զինուորի մը վրայ՝ հարց տալով՝ «ո՞վ ես դուն եւ ինչի՞ վստահելով կը պոռաս վրաս»: Պատկերացուցէք, երբ 1967-ին Իսրայելեան բանակը Արաբական շրջաններ մուտք կը գործէր անոնք (Արաբները.- Ս.Ա.) Իսրայելացի զինուորին անուը լսելով դող կ'ապրէին: Սակայն այսօր իրավիճակը բոլորովին փոխուած է: Արաբը իր աչքերուն առած է մահը եւ ինք իրեն հարց կու տայ ի՞նչ տարբերութիւն, եթէ այսօր մեռնի կամ վաղը: Արաբին համար այսօր կարեւորագոյնը իր պայքարի շարունակութիւնն է:

- Քաղաքական գետնի վրայ ի՞նչպէս կը գնահատէք Իսրայելի վիճակը:

Իսրայելի տագնապը նաեւ քաղաքական հիմք ունի որովհետեւ այսօր ան չունի անցեալի առաջնորդները: Այսօր Իսրայելը ղեկավարող անձնաւորութիւնները անցեալի ուժականութիւնը չունին: Մօտիկ անցեալին Իսրայելի համար կարեւոր ազդեցութիւն ունեցած ղեկավարներ ինչպիսին էին՝ Մոշէ Տայանը, Կոլտա Մայիրը, Մէնախիմ Պէկինը եւ Պէն Կորիօնը, որոնք չկան այսօր: Սիոնիզմը ինքը լուրջ տագնապի առջեւ է եւ այդ տագնապը բոլոր գետիններու վրայ երեւելի է: Այս բոլոր պատճառները թուելէ ետք պետք է ըսել, որ Իսրայել նախանձելի վիճակ մը չունի հակառակ անոր որ միջազգային հարթակին վրայ անուրանալի է, որ Իսրայելեան լոպիները շատ մեծ տնտեսական, ապահովական, ընկերային եւ քաղաքական ազդեցութեան գօտիներ ունին:

- Կազայի այս պատերազմին առընթեր եւ հակառակ ընթացող բանակցութիւններուն տակաւին դժուար է ըսել, որ շրջանը հաւանական իրադարձարով մը ամբողջական խաղաղութեան հանգրուան մը պիտի մտնէ: Ի՞նչպէս կը գնահատէք իրավիճակը մանաւանդ, որ վարչապետ Նաթանիահու յայտարարած է, թէ ի գին ամեն ինչի Իսրայելեան բանակը հիմնովին պիտի քանդէ Կազայի գետնային անցքերը:

Տեսե՛ք, Իսրայելեան բանակին համար գերիսնդիրը Կազան գրաւելը չէ: Այլ Կազայի գետնային անցքերուն քանդումը: Նկատի առէք նաեւ, որ Կազան գրաւելու համար Իսրայելեան բանակը կրնայ մի քանի հազար զոհ տալ բան մը, որուն պատրաստ չէ ո՛չ կառավարութիւնը եւ ո՛չ ալ ժողովուրդը: Ու հակառակ անոր, որ Իսրայել մեծ թիւով բանակային զօրքեր կուտակեց, Կազան ցամաքային գրաւման չենթարկեց:

- Այսինքն Իսրայել պիտի կարողանա՞ր գետնային անցքերը քանդել:

Կ'ենթադրեմ այո, պիտի կարողանայ: Նկատի պետք է առնէք նաեւ Եգիպտոսի կեցուածքը, որ նոյնպէս համամիտ է, որ «Համաս»ի համար կարեւորագոյն խաղաքարտի վերածուած նկուղները քանդուին:

- Ինչպէ՞ս կը բնութագրէք Իրանի Իսլամական հանրապետութեան կողմէ Իսրայելի հասցէին հնչեցուած սպառնալիքները:

Ես լուրջի չեմ առներ այդ սպառնալիքները: Իսրայելի համար անելի հեշտ է կռուիլ կանոնաւոր

բանակի մը դեմ քան *կերիլայական* խուճապներու եւ *միլիցներու* դեմ: Իսրայել կրնայ մինչեւ ծայր երթալ ու նոյնիսկ հարուածել Իրանեան դիրքեր: Ան նոյնիսկ պատրաստ է անսպասելի ու ծայրայեղ քայլերու դիմելով ամբողջ շրջանը «այրել»:

- Այս վերջին պատերազմին Արեւմտեան մամուլը եւ յատկապէս իսրայելամետ տարբեր աղբիւրներ յաճախ կը խօսին այն մասին, որ «Համաս» Կազայի խաղաղ բնակչութիւնը որպէս մարդկային վահան կը գործածէ (*Human Shields*): Ի՞նչքանով ճիշդ են այս տեղեկութիւնները:

Նոր չէ այս մեթոտը. նոյն մեթոտը կը գործածէին իսրայելացի ղեկավարներ: Օրինակ 1940-ականներուն իսրայելեան բանակի ատաղձը կազմող «Էթգէլ» եւ «Հականա» ջոկատները այդ ձեւը կը կիրարկէին: Այս առումով քանի մը օր առաջ նկատեցի, որ պաղեստինցի զինեալներ իսրայելեան տարածքներու ուղղութեամբ հրթիռներ կ'արձակէին ու անոնց մօտ կանգնած էր կրօնաւոր մը եւ մի քանի երախաներ: Իրօք, ի՞նչ գործ ունին այդ անմեղ երախաները հոն: Այս ի՞նչ կը նշանակէ: Յետոյ կը խօսուի, որ Կազայի տակ գետնափոր երկրորդ Կազա մը գոյութիւն ունի: Եթէ այդպէս է, ապա ի՞նչու «Համաս» իր ժողովուրդը այդ ապահով տեղերը չառաջնորդեց: Կամ ինչպէս ընդունիլ մզկիթները զինապահեստանոցի վերածելն ու նոյնիսկ անոնց (մզկիթներու- Ս.Ա.) մէջ գետնային անցքեր բանալը: Չարմանալի չեն այս բոլորը, որովհետեւ «Համաս»-ին համար գետնային անցքերը որպէս տնտեսական գործօն կը ծառայեն: Մինչեւ վերջերս կը խօսուէր, որ անցքերը ակելի քան 15.000 ամերիկեան տոլարով կը վաճառուէին ու անցքերու «առեւտուրը» կը կատարուէր միայն «Համաս»-ի կողմէ: Այսօր Կազայի մէջ դէպի Եգիպտոս բացուած 1300 գետնային անցքեր կան ու այդ անցքերուն շնորհիւ «Համաս» զենք փոխադրելէ զատ նաեւ առեւտրական գործառքներ կը կատարէ: Գաղտնիք ալ չէ, որ «Համաս»-ի ղեկավարները նիւթական մեծ եկամուտներ կ'ապահովեն այդ անցքերուն միջոցով մանաւանդ որ Կազան տարիներէ ի վեր տնտեսական լուրջ պաշարման տակ է:

- Կարելի՞ է քիչ մը Հայկական Երուսաղեմի մասին խօսիլ:

Երուսաղեմի հայերուն համար շատ կարեւոր է, որ հայութեան բոլոր հատուածները մօտէն հետեւին այն շրջաններուն իրավիճակին, ուր մեր ժողովուրդը տագնապահար է: Այսինքն դրական կը գնահատենք հայութեան հետաքրքրութիւնը Հալէպի, Քեսապի, Դամասկոսի կամ այլ շրջաններու հանդէպ, ուր մեր ժողովուրդը ամենօրեայ մահու եւ կենաց պայքար կը մղէ: Այդ համայնքներուն վիշտը նաեւ մեզի կը տագնապեցնէ: Բայց պէտք չէ մոռնալ, որ 1930-ականներէն սկսեալ Երուսաղեմի հայութիւնը կ'ապրի բաւական լարուած ու վտանգաւոր կացութիւններու մէջ: Հիմա, երբ արդէն պետականութիւն ունինք, ժամանակը չ'է որ մեր պատասխանատու մարմինները լրջագոյնս մօտենան Երուսաղեմի հայութեան: Գաղտնիք չէ, որ մեր ակնկալութիւնները նիւթական չեն, այլ մենք կարիքն ունինք բարոյական եւ քաղաքական նեցուկի: Մեր կացութիւնը այսօր բաւական ծանր է: Կ'ապրինք անապահով վիճակներու մէջ ու չմոռնանք որ, Երուսաղեմի դիրքը ոչ միայն հայութեան, այլ ամբողջ աշխարհին համար կարեւորագոյն նշանակութիւն ունի: Հայութիւնը կանգնած է երկու հզօր եկեղեցական աշխարհներու միջեւ ու մենք որպէս ամենէն հին համայնքներէն մին համահաւասար իրաւունքներ ունինք Կաթողիկէ եւ Յոյն Ուղղափառ դարաւոր եկեղեցիներուն հետ:

- Ձեր խօսքէն արդեօ՞ք պէտք է հասկնալ, որ Սադիմահայրութեան ապագան վտանգուած է:

Բնականաբար կան վտանգներ մանաւանդ, որ Կազայի մէջ տեղի ունեցած դէպքերուն հետեւանքով ամբողջ երկրին մէջ սուր լարուածութիւն կը տիրէ: Եւ այս առումով մենք կը փորձենք միշտ զգոյշ ըլլալ մեր շրջագայութիւններուն մէջ: Սակայն մեզի համար աւելի լուրջ սպառնալիք է կալուածներու հարցը:

- Կարելի է՞ մանրամասնութիւններ տալ:

Օրինակ, մենք հսկայական կալուածներ ունինք Երուսաղէմի մէջ (խօսակիցս բնականաբար նկատի ունի Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հովանաւորութեան տակ եղած կալուածները.- Ս.Ա.) եւ հայրութեան թիւի նօսրացումով այդ կալուածներու վիճակը կրնայ վտանգի մատնուիլ: Պէտք է նաեւ նկատի առնել, որ մեր մօտ համայնքային որեւէ վեճի պարագային Իսրայէլի կառավարութիւնը նեցուկ կը կանգնի Յունական պատրիարքութեան պարզ անոր համար, որ անոր կարեւորագոյն կառոյցները կառուցուած են Յունաց Պատրիարքութեան հողերուն վրայ: Օրինակ Իսրայէլի Քնեսէթը (Խորհրդարան- Ս.Ա), ինչպէս նաեւ Երուսաղէմի, գլխաւոր թանգարանն ու տասնեակ այլ կարեւոր կառոյցներ եւ կառավարական շէնքեր կառուցուած են Յունաց Պատրիարքութեան կալուածներուն վրայ: Իսրայէլի համար կարեւորագոյն խնդիր է այդ հողերուն տիրանալը եւ ատոր համար Իսրայէլի կառավարութիւնները միշտ դրական մօտեցում ունին Յոյներուն հանդէպ: Գալով յունական կողմին, անոնք որեւէ ատեն եւ իրենց պատրիարքին կողմէ եղած անակնկալ եւ անսպասելի ստորագրութեամբ մը կրնան այդ հողերը զիջիլ: Այս է ընդհանուր պատկերը այսօր ու այս առումով Հայաստանի իշխանութիւնները եւ ամբողջ սփիւռքը պէտք է ուշադիր աչքերով նային Երուսաղէմի հայոց կալուածներու խնդրին: Մի՛ զարմանաք եթէ օր մը յոյները Իսրայէլի կառավարութենէն պահանջեն հայերը հեռացնել իրենց շրջաններէն եւ ատոր դիմաց իրենք իրենց կալուածները Իսրայէլին տրամադրեն: Ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը այդ ատեն: Ասոր համար է, որ կ'ըսեմ թէ մենք վտանգուած ենք: Բայց ցաւօք ես մօտեցման լրջութիւն չեմ տեսներ հայկական պատասխանատու մարմիններուն մօտ: Ու զարմանալի է, որ երբ անոնցմէ շատեր Երուսաղէմ կ'այցելեն կը հիանան, կը զարմանան, կը հպարտանան ու այդ հպարտութիւնը հոս Երուսաղէմի մէջ ձգելով կը հեռանան ... Այս է հիմնական մտահոգութիւնս:

